

նում վանքում: Անպակաս են ամառուայ ընթացքում նաև օտարազգի այցելողներ, որոնք ամենամեծ պատկառանքով դիտում, հետազոտում են այս հնադարեան անխախտ յիշատակաբանը...

Նորէն եպ. Ստեփանէի մահից յետոյ ս. Նաչի վանահայր նշանակուեց Ն. վ. Նահապետեան:

ՄՈՒՐԽԱԹԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԻՒՐԴԵՐԸ *)

Պարսկաստանի քիւրդերը, ինչպէս ասացինք, բաժանուում են երկու խոշոր, միեւնոյն ժամանակ խիստ հակադիր դասակարգերի, աշիրէթներ կամ լաւ է ասել ձրիակերներ, և ռայա կամ աշխատող, կերակրող ձեռներ:

Ռայա դասակարգը գործ ունի գլխաւորապէս հողի հետ: Նա պարապում է երկրագործութեամբ. շատ տեղերում ցանում է բացառապէս ցորեն. պահում է խաշներ և մասամբ տաւարներ: Քիւրդերի ցանած հողերի մեծագոյն մասը դեմի (անջրդի) է: Դեմի արտերի սովորական ցանքան է բաւարար անձրևի ժամանակ մէկին 15—20. իսկ տարիներ են լինում, որ բերքը տալիս է 1-ին 25—30, դեռ էլ աւելի: Չմոռանանք այս էլ նկատել, որ պատահում են և սակաւ անձրևային տարիներ, որ դեմի հողերը տալիս են շատ աննշան բերք: Քիւրդը ամեն տարի բերքի մի որոշ մասը ծախելով՝ բաւարարութիւն է տալիս իր միւս պահանջներին: Իդէպ է ասել, որ քիւրդերի մէջ մինչև այժմ մնացել է աւանդական, դրամի ծագումից առաջ եղած առևտրի սովորութիւնը, այն է՝ իրեր, ապրանքներ փոխանակել. ցորեն չունեցող քիւրդը տալիս է խաշ կամ տաւար և դրա դիմաց ստանում ցորեն. դրամ շատ սակաւ է ճարւում քիւրդերի մօտ, մանաւանդ մեծ գումար, և առհասարակ քիւրդը փող չի սիրում:

Այսպէս ուրեմն, ռայա քիւրդերը պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ, իսկ աշիրէթները.

*) Տես «Մուրճ» № 5

նրանց մշտական և աւանդաբար ժառանգած զբաղմունքն է աւագակութիւնը և պատերազմը, թալանը և ասպատակութիւնը, կատարած կամ իրանց օգտին, կամ ուրիշի, իբր վարձկաններ: Աշիրէթները ձմեռը, սարերը ձնելու միջոցին, ցած են գալիս լեռներից և բացառապէս ծանրանում ուսյա դասակարգի վրայ: Ռայաթը պարտաւոր է կատարել նրանց իւրաքանչիւր քմահաճութիւնը և կերակրել ամբողջ 3—4 ամիս, ձմեռուայ ընթացքում:

Սկսում է գարունը, գետինը ծածկում կանաչ խոտով, սարերից վերանում ձիւնը, քիւրդ աշիրէթները վերցնում են «չադիրները» և գնում «եյլադ», դէպի սարերը: Այդ սկսում է առհասարակ ապրիլից, այդ ժամանակում հազիւ սարերում ձիւնը հալում է: Աշիրէթները իրանց չադիրները հաստատելով սարերի յարմարաւոր դիրքերում, կանաչոտ և ապահով վայրերում, սկսում են իրանց սովորական կողոպուտը, աւարառութիւնը և ասպատակութիւնները:

Քիւրդ աշիրէթները մնում են սարերի վրայ մինչև աշնան վերջը, երբ սարերը ձնում են: Այդքան ժամանակի ընթացքում անդադար յարձակում են մօտիկ գաւառների և գիւղերի վրայ, ըջում տանում են հօտերով ոչխարներ, ձիեր, կողոպտում են տները, կտրում կարաւանների առաջ և թալանում, իսկ շատ անգամ էլ բնականաբար լինում են ընդհանրումներ և կատարում սպանութիւններ:

Քիւրդ աշիրէթի անմիջական յարձակումներին ամենից շատ ենթակայ է Մալմաստ գաւառը: Մալմաստի համարեա բոլոր շրջապատող բարձութիւններին թառած են քիւրդերը: Հարուլի փեշերը բռնել են մամադիները, շարան և նրա շրջակայքը՝ Ջաֆար-աղան, Սոմայի քիւրդերն էլ միւս կողմից: Անցեալ 1903 թուի յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների կազմած մանրամասն վիճակագրութիւնը ցոյց տուեց, որ քիւրդերը տարել էին միայն Մալմաստից 6000 թումանի մալ. իսկ այդ մեծ գումար է Մալմաստի համար: Շատ գիւղեր, որոնք գտնւում են աւելի հեռու և սահմանի վրայ, ստիպուած՝ չեն պահում տաւարներ և ոչխարներ: Առհասարակ շատ քիչ են մօտենում հայաբնակ գիւղերին, քիւրդերը ինչ-որ «գերբնական ոյժ» են գտնում հայաբնակ գիւղերում, իսկ «կաշախ» անունը հօսարսափեցնում է նրանց: Անցնում են հայաբնակ գիւղերի մօտով, ոչինչ չեն անում և յարձակում են թիւրքաբնակ գիւղերի վրայ:

Առհասարակ քիւրդերի աւարառութիւնները կատարում են օրը ցերեկով, պարսիկ պաշտօնեաների քթի տակ և միշտ էլ

մնում են անպատիժ։ Կառավարութեան պաշտօնեաները սաստիկ վախենում են քիւրդ ցեղապետներից և յաճախ շողոքորթական յարաբերութեան մէջ լինում նրանց հետ, մի կողմից էլ ոյժ տալիս նրանց աւերելու տենչին։ Յիշենք մի երկու փաստ։ Մօտիկ ժամանակներում, դեռ մի քանի տարի առաջ, սոմացի Ղասըմ աղայի մարդկանցից բանտարկուած են լինում Դիլիմանում։ Ղասըմ աղան ցերեկով յարձակում է Դիլիմանի վրայ, հանում է բանտից իր մարդկանց և տանում։ Եւ նրա այդ յանդուգն վարմունքը կատարում է առանց որեւէ դիմադրութեան և մնում է անպատիժ։

Պարսիկ պաշտօնեաները խարէութեամբ կանչում են Մահմադ-աղային, յայտնի Ջաֆար-աղայի հօրը, տանում են Դիլիման և ձերբակալում են դատաւորի տանը։ Ձերբակալման լուրը իսկոյն հասնում է Ջաֆար-աղային. նա անմիջապէս վերցնում է մօտ 50—60 լաւ կռուողներ և գալիս յորձակում է Դիլիմանի վրայ, հրացանի ընդում դատաւորի տունը և Մահմադ-աղային ազատում, տանում։

Սալմաստցիներին շատ լաւ յայտնի են Ջաֆար-աղայի յանդուգն քաջագործութիւնները. նրանցից դողում են ոչ միայն պարսիկ պաշտօնեաները, այլև քիւրդ ցեղապետները։ Նա ընդհարում ունեցաւ և իր հօր հետ, որը այժմ ապրում է պարսկա-տաճկական սահմանագլխում, Շէյխ Մահմադ Սադըկի մօտ։ Առհասարակ այդ ընտանիքը տուել է յայտնի քիւրդեր. յայտնի էր և Ալի աղան, Ջաֆարի պապը, որը մի ժամանակ ամբողջ Սոմայի գլխաւորն էր. պակաս յայտնի չէ և Մահմադ աղան, նա շատ քաջագործութիւններ է կատարել։ Իսկ Ջաֆար-աղայի յանդգնութիւնները էլ աւելի առաջ են գնում. նա սպառնում է անգամ, որ հակառակ պարագային ոչոքի, ոչ մի կառավարութիւն չի ճանաչելու, ինչ կարող են, թող չխնայեն։

Պարսկա-տաճկական սահմանակից գաւառները և գիւղերը ենթակայ են նաև Տաճկաստանի քիւրդերի յարձակումներին։ Տաճկաստանի քիւրդերը, մեծ մասով տխրահոշակ Շարաֆ-բէգի աշխրէթները, յաճախ անցնում են սահմանը և Պարսկաստանի հողի վրայ աւերած առաջ բերում, կողոպտում, թալանում, սպանում և նորից անցնում սահմանը։ Ահա այս պարագայում Պարսկաստանի աշխրէթները ներկայանում են մի զօրեղ պատնէշ և սանձում նրանց յարձակումները։ Պարսկաստանի քիւրդերն էլ նոյն ձևով պատասխանում են Տաճկաստանի քիւրդերին, որոնք էլ շուտ-շուտ անցնում են տաճկաց հողը, յարձակւում նրանց վրայ և կողոպտում, սպանում, աւերում։

Հեռացրէք այդ ընդդիմադիր ոյժը, և անմիջապէս Պարս-

կաստանի սահմանակից գաւառները կը դառնան Տաճկաստանի քիւրդերի սանձարձակ և ընչաքաղց աւազակութիւնների և կողոպուտի թատերաբեմ, անմիջապէս ոտի տակ կը տրորեն և սարսափելի աւերմունք կ'առաջացնեն, իսկ պարսից կառավարութիւնն էլ հազիւ թէ կարողանայ գէթ որոշ չափով սանձել քիւրդերին:

Տաճկաց կառավարութիւնը ասես մի անգամ ընդմիշտ Պարսկաստանի քիւրդերին զսպելու համար, այն էլ պարսից կառավարութեան միջոցով անցեալ աշնան սկզբներին պարսկաստան էր ուղարկել մի գայմազամ և մի միւղիբ, որոնք խիստ պահանջում էին մամադիների տարած թալանը: Պարսից կառավարութիւնը շատ նեղն էր ընկել: Խոյի, Ուրմիի և Սալմաստի դատաւոր Մաջիդ-ու-Սալթանէի հրամանով մամադիների ցեղապետ Լմար-աղան գալիս է Դիլիման. նրա հետ է լինում իր եղբայրը և 45 ձիաւորներ: Կարգադրւում է գործը վերջացընել 400 թումանով, և Լմար-աղան էլ համաձայնում է, բայց Մաջիդ-ու-Սալթանէն գործը ձգձգում է՝ ունենալով իր գաղտնի մտադրութիւնը: Նոյեմբերի 7-ին կրկին Լմար-աղան իր հետեւորդներով գնում է Մաջիդ-ու-Սալթանէի մօտ և ընկնում պատրաստուած ծուղակի մէջ: Մաջիդ-ու-Սալթանէն յայտնում է, թէ թագաժառանգից հեռագիր ունի որ, անմիջապէս յետ է պահանջում ամբողջ թալանը, եթէ չի ուզում խիստ պատժուի: Լմար-աղան պահանջում է ցոյց տալ վալիաթի հեռագիրը: Մաջիդ-ու-Սալթանէն սաստիկ զայրանում է և հրամայում իր մարդկանց ձերբակալել Լմար-աղային: Վերջինս իսկոյն ատուր-ճանակը քաշում է, բայց Մաջիդ-ու-Սալթանէն դաշոյնով վիրաւորում է նրան և զինաթափ անում:

Այս իրարանցումը անմիջապէս դուրսը յայտնւում է. Ահմէդը, Լմար-աղայի եղբայրն անցնում է մամադիների գլուխը, վազում են քարվանսարա ձիերը նստելու և պաշտպանողական զէրք բռնելու, բայց յանկարծ դռները փակուած են գտնում: Նրանց և սարքազների մէջ սկսւում է կռիւ. վիրաւորւում են Ահմէդ աղան և մի ուրիշ մամադի: Մաջիդ-ու-Սալթանէի կարգադրութեամբ անմիջապէս դրանց զլխատում են և գլուխները կախում հեռապրատան առաջ իցոյց խոնուած ամբոխի: Բռնուած էր և մի ուրիշ մամադի, որին յաջորդ օրը թնդանօխի բռնեցին:

Ձերբակալուած Լմար-աղային էլ տարան Ուրմի ընդ. դատաւորի մօտ. ենթադրւում էր, որ կամ ճանապարհին մամադիները կը յարձակուեն և կը փախցնեն իրանց ցեղապետին, կամ կաշառքով կ'ազատեն: Եւ իսկապէս վախենում էին մա-

մադիկների յարձակումից, անշուշտ հէնց դրա համար էր, որ մի օր առաջ դիտաւորեալ լուր էր տարածուած, թէ Թաւրիզ է տարուելու, և յանկարծ լուր ստացուեց, որ արդէն Լմար-աղան Ուրմիրում բռնուած է թնդանօթի:

Այդ դէպքը ճնշող տպաւորութիւն թողեց քիւրդերի վրայ: Ասում են, որ նման խաղ պատրաստուած է և Զաֆար-աղայի վերաբերմամբ, բայց այդ չի աշողւում: Այժմ Զաֆար-աղան շատ զգոյշ է. Դիլիման գալիս հետը բերում է 30—50 լաւ զինուած քիւրդեր, անգամ հեռագրատուն մտնելիս նա մի քանի քիւրդեր է վերցնում հետը սենեակում, իսկ ինքը հրացանը ձեռքից վայր չի դնում:

Մամադիկները զրկուելով իրանց քաջ առաջնորդներից՝ անզուգու մնացին և բաւականին ցրուեցին: Մամադիկների մի մեծ բազմութիւն չուեց դէպի Սոմայի: Մի ժամանակ լուր տարածուեց, թէ Լմար-աղայի 12 տարեկան որդին անցած մի խումբ մամադիկների զուգի՝ յարձակում է այս կամ այն գիւղի վրայ, սպանում պատահած թուրքին՝ որպէս վրէժխնդրութիւն: Այժմ մամադիկները սկսել են կամաց-կամաց խմբուել և ցեղապետ է համարւում Մսոո ոսպին, Լմար-աղայի ծերունի հայրը:

Մի քանի ամիս առաջ շատ խօսւում էր, թէ օսմանեան կառավարութիւնը առաջարկել էր պարսից կառավարութեան զինաթափ անել քիւրդերին: Բայց այդ խօսակցութիւնը որոշ հետևանք չունեցաւ: Ոմանք ընդունում էին այդ որպէս բարեւար միջոց, բայց տաճկական կառավարութեան աւանդական բեօիմին մօտիկ ծանօթ մարդիկ գտնում էին գաղտնի խաղ թաղնուած այդ մտքի տակ: Կարծւում էր, որ տաճկաց կառավարութիւնը կը խաբի և ապա գաղտնի կերպով զէնք կը բաժանի իր քիւրդերին: Թէ որքան իրական է այդ առաջարկը տաճիկ կառավարութեան կողմից և ինչ բանակցութիւններ եղան երկու տէրութիւնների միջև, որոշակի յայտնի չէ:

IV

Քիւրդ ընտանիքը առհասարակ մեծ է, բազմամեղաւ, ինչպէս հայ նահապետական օջաղները: Ընտանիքի անդամները, ամուսնացած տղաները չեն ցրւում, զատոււմ հայրենի տնից: Ամեն մի քիւրդ ընտանիք բաղկացած է առնուազն տասն հոգուց. կան և ընտանիքներ, որոնք ունին 20—30 հոգի:

Ինչպէս նահապետական ընտանիք՝ ունի նա իր մեծը, իր հովանաւորող հայրը: Բոլոր որդիները նրա առաջ են պտոյտ

գալիս, նրա կարգադրութեամբ շարժուում։ Ամուսնացած որդիին աւելի ազատ է և իրաւունքներ է վայելում, քան ամուրիին։ Երիտասարդ, ամուրի քիւրդը գտնւում է հօր խիստ հակողութեան տակ, նրան ուսուցանում է այն բոլորը, ինչ որ կազմում են քիւրդի կեանքի մէջ անհրաժեշտ գիտելիքներ, ինչպէս ձիավարութիւն, զէնք բանեցնել։ Հայրը թելադրում է գնալ և գողանալ ոչխարներ, ձիեր կայլն։ Քիւրդի աչքում մէկը այն ժամանակ միայն մարդի կոչում է ստանում, երբ նա սպանում, թաւանում, ասպատակում է։ Իսկ այդ բոլորը քիւրդի հայեացքով և տրամաբանութեամբ յանցանք չի համարւում, այլ առաւելութիւն։ Ինչ որ ձեռք է բերւում ոյժով, կոռուով, դա արդար է քիւրդի համար և սրբագործուած։

Քիւրդ աղջիկը ընտանիքում առանձին իրաւունքներ չի վայելում. նրա անհատականութիւնը համարեա մեռած է, նա հօր ճորան է։ Ամուսնութեան դէպքում անգամ չեն հարցնում նրա կամքը։ Այս երևոյթը մեզ չի զարմացնում, քանի որ մեր շատ գիւղերումն էլ նոյն դրութիւնն է։ Ամուսնութեան մէջ քիւրդը խիստ կերպով առաջնորդւում է տնտեսական տեսակէտներով։ Քիւրդ աղջիկը համարեա ծախւում է, հօրը այնքան չի հետաքրքրւում փեսայի ինչ դիրքի, քաջութեան տէր լինելը, որքան «բաշլղը»։ Քիւրդերի մէջ սովորական «բաշլղը» համարւում է 50—100—200 լիւրա, տաճկական ոսկի, երբեմն էլ աւելի։ Տալիս են նոյնպէս ձի, զէնք կայլն։ Բաշլղի սովորութիւնը պարտադիր է բոլոր քիւրդերի մէջ։ Այս նոյն սովորութիւնը պահւում է և Արարատեան շատ հայաբնակ գիւղերում։

Աղջիկ փախցնելն էլ քիւրդի կեանքում սովորական երեւոյթների շարքն է անցել և սրբագործուած համարւում։ Ժողովրդական երգի հերոս, նիւթ է դառնում այն երիտասարդ քիւրդը, որը աղջիկ է փախցնում։ Եւ զարմանալին այն է, որ բախտաւոր է համարւում այն ամուսնութիւնը, երբ տղամարդը առևանգել է իր սիրուհին հօր ընտանիքից, իսկ այսպիսի դէպքերում կիներ մի առանձին հպարտութեամբ է նայում իր ընկերուհիների վրայ։

Ամուսնանալուց յետոյ քրդուհին գրաւում է պատուաւոր դիրք։ Ընդհանրապէս քիւրդ կիներ շատ յարգւում է և անպայման աւելի ազատ է, քան հարևան ազգութիւնների, օրինակ՝ պարսիկների, տաճիկների կանայք։ Կիներ ներկայացնում է քիւրդի մօտ ոչ հարեմի զարդ, կրքերին յագուրդ տուող արարած, ինչպէս այդ տեսնում ենք տաճիկների և պարսիկների մօտ, այլ իբրև ընկեր, աշխատող, աշակցող ձեռք։ Եւ ամուսնական կապը քիւրդերի կեանքում համարւում է ամենանուիր-

բական բանը: Եւ հէնց քիւրդերի ամենախիստ, ծանր երդու-
մը հաստատուած է այդ ամուսնական կապի—թալախի վրայ:

Քիւրդի կեանքում կրկին ամուսնութիւնը շատ քիչ է պա-
տահում, որովհետեւ համարում է նախատինք, անպատուաբեր
բան: Եւ այրի կինը հաւաքում է իր շուրջը որդիներին, պատ-
մում ամուսնու քաջագործութիւնները, վրէժխնդրութեան, քէնի
տենչը վառում նրանց մէջ—եթէ ամուսինը սպանուած է—ա-
պագայում արեան փոխարէնն առնելու: Նա օրօրում է իրան
ամուսնու քաղցը յիշողութիւններով և այսպէս անցկացնում իր
կեանքը:

Արեան վրէժխնդրութիւնը ինչպէս բոլոր կիսավայրենի
ցեղերի, նոյնպէս և քիւրդերի կեանքում շատ խոշոր տեղ է
բռնում: Եւ այդ ժառանգաբար անցնում է սերունդից սերունդ
և աւելի ու աւելի մոլեգնութեամբ է արտայայտւում: Քիւրդ
ժողովրդի հասկացողութեամբ՝ սպանուածը հանգիստ չի լինում
գերեզմանում, մինչև որ առնում են նրա արեան փոխարէն: Շատ
անգամ սպանում են ցեղի մի բոլորովին անմեղ քիւրդի՝ որ-
պէս վրէժխնդրութիւն նոյն ցեղի յանցաւոր քիւրդի վերաբեր-
մամբ: Քիւրդ ցեղը ներկայանում է որպէս մի մեծ ընտանիք,
որի բոլոր անդամներն էլ կապուած են իրար հետ և կազմում
են մի ամբողջութիւն: Հէնց դրա համար է, որ երբ մէկը յափըշ-
տակում է ուրիշ ցեղի մալը, սպանում է, այդ դէպքում ոչ թէ
թշնամանում, լարւում են երկու-երեք քիւրդերը, այլ ամբողջ
ցեղերը: Եւ այսպիսով առաջանում են ցեղերի մէջ անընդհատ
կրկնուող յարձակումներ, կռիւներ, անհաշտ թշնամութիւններ:

Բայց այդ մեծ ընտանեկան կապը ունի և իր օգուտները:
Ամբողջ ցեղը աշխատում է հաւասարութիւն պահպանել իր
մէջ, չթողնել, որ մէկն ու մէկը փշանայ, ընկնի: Երբ մէկի ոչ-
խարնբըր տանում են, ցեղի զատ-զատ մասը ընտանիքները մի
մի ոչխար են տալիս նրան և պակասը ծածկում: Մի խօսքով
այդ մեծ ընտանիքի մէջ կայ փոխադարձ օգնութեան սովորու-
թիւնը. այնպէս որ կարելի է ասել, որ կոմմունիզմը որոշ չա-
փով դործնականապէս տիրում է քիւրդերի մէջ:

Մոռացայ ասել, որ քիւրդերի սպառնալիքը՝ արեան վը-
րէժխնդրութեան դէպքում՝ կայանում է «բըսակ» խօսքի մէջ:
Քիւրդի «բըսակը» (սպասիր) դադարկ սպառնալիք չէ: Նա շատ
խիստ հետևում է իր «բըսակ»-ին, և բացառութիւններ պիտի
համարել այն դէպքերը, երբ չի կատարում քիւրդը իր սպառ-
նալիքը: Ճիշտ է, շատ անգամ տարիներ են անցնում, բայց էլի
չի մոռացւում «բըսակը»:

Քիւրդը հիւրասէր, հաւատարիմ և մանաւանդ անկեղծ է,

նա նենգութիւն, կեղծութիւն չգիտէ. ասենք այդ նրանց չի էլ աշողուում: Շատ նկատած բան է, որ քիւրդը թէ թշնամութեան և թէ բարեկամութեան մէջ անկեղծ, ազնիւ է:

Նրա ժողովրդական երգը շատ ուրախ, պատերազմական և որոտընդոտ բնաւորութիւն է կրում, որ խիստ բնորոշում է քիւրդ ժողովուրդը. քիւրդի երգը լալկան, ցաւոտ շեշտ և խաղեր չունի (?), ինչպէս հայ ժողովրդի երգը: Քիւրդ ժողովրդական երգը լսելիս թւում է, թէ քիւրդը նստած ձին, նիզակըն ձեռքին, հրացանը ուսին թռչում է դէպի լեռները: Եւ քիւրդերը երգում են ոչ թէ փոքրիկ, յանգաւոր ոտանաւորներ, այլ երգում, պատմում են երկար դրամաներ, վէպեր: Քիւրդ ժողովուրդը ոչ մի աչքի ընկնող երեւոյթ չի մոռանում և դարձնում է կրակոտ երգի նիւթ: Ոչ ոք նկատելի է ժողովրդական երգերի մէջ արեան վրէժնդրութեան կոչը, իսկ այդպիսի կտորները երգում են շատ ցասկոտ կերպով:

Քիւրդ ժողովրդի կեանքի մէջ, նրա բարքերի շարքում խիստ նշանակալից տեղ է բռնում ցեղապետների, նշանաւոր քիւրդերի թաղման հանդէսը: Ամբողջ ցեղի քիւրդերը՝ սե են հազնում այդ օրը: Բոլորը իրանց թոնրի մոխիրը հանում, տանում, լցնում են ցեղապետի դրան առաջ, այնպէս որ կազմում է մոխրի մի մեծ կոյտ: Մենոող ցեղապետի ձին զարդարում են ոտից գլուխ սե, վրան դնում ցեղապետի գլխարկը, կապում նրա զէնքերը և այսպէս բերում կանգնեցնում են դրան առաջ ըսկսում վայ տալ, սգալ և ամբարուած փողին վերցնում ու շաղ տալիս իրանց գլխին: Եւ այդ ժամանակ բարձրանում է ընդհանուր վայնասունը, երկինքը ծածկում է փողով: Պատմում են, որ Ղասըմ-աղայի (Սոմայի ցեղապետ) թաղման ժամանակ թէև անագին փողու բլրակ էր կազմուած, բայց երբ նրա եղբայրը գալով (ուրիշ տեղ էր եղել)՝ ամբողջ փողին սպառուած է գտնում, ստիպուած՝ փէյին (կենդանու աղբ) է շաղ տալիս գլխին, լցնում բերանը, խփում գլխին և վայում:

Քիւրդերը մեռելը դնում են աջ կողքի վրայ, Գերեզմանի բերանը լայն են անում, իսկ ցածը շատ նեղ, հազիւ մեռելը կողքի վրայ տեղաւորում է. դնում են խոր և ապա հող լցնում: Հետաքրքիր է այն, որ քարը դնելուց յետոյ մոլլան կամ շէյխը ծեծում է քարը և ասում. «Քեզ եմ ասում, լաւ լսիր, այս ինչի տղա (անուանում են մօր անունով), դու ես մեռել, զգոյշ եղիր, ուրախ եմ (սատանան) չգայ՝ քեզ խաբի, դու Աստուած ունիս. ասա՛ ես առաջ եմ մեռել»:

Դրանով իբր թէ նախազգուշացնում են՝ չլինի՞ թէ խաբուեն, որովհետեւ սատանան գերեզմանում անգամ հետեւում է,

որ նրանց ճանապարհից հանի: Եթէ քիւրդը խաբուի, չի գընայ արքայութիւն: Սատանաները որպէս թէ համոզում են ննջեցեալ քիւրդերին, որ նա մեռած չէ, հէնց դրա համար է, որ ասում է շէյխը. «ասան, որ ես վաղուց եմ մեռել»:

Քիւրդ ռաւանդը, այսինքն կոռուողը երբ մեռնում է իր բնական մահով, քիւրդերը չեն լացում, չեն սգում, այլ կրկընում են. «Դու պիտի կռուի դաշտում մեռնէիր, դու պիտի անուն հանէիր»: Երկու խօսք, բայց շատ բան է պարզում, բնորոշում քիւրդերի հոգեբանութիւնից:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

Մ Ի Վ Ե Ր Ք Է Լ . . .

(Պատմուածք)

I

Յուլիսեան երեկոյ է:

Գիշերն իջաւ և իր հսկայ թևերի տակ ծածկեց ամեն ինչ. դաշտ ու այգեստան մարուեցին ու չքացան, տիրեց համառարած խաւարը: Երկնակամարից բխրաւոր մեծ ու փոքր աստղեր լոյս են ցողում երկրի վրայ, բայց գիշերը ամենազօր է, նա կլանում է այդ շողերն էլ, կլանում ու չի փոխւում:

Անշարժ է օդը, ամառուայ թմրեցնող ու փոշոտ օդը: Բարդինները սևաւոր ուրուականների նման ցցուած են խաւարի մէջ, կարծես վրայ հասնող գիշերը նրանց քարացրել է:

Նիւրհում էր ամբողջ վ. քաղաքը:

Քաղաքի թրքախառն բնակուած թաղերից մէկում, հէնց դաշտին մօտիկ մի տան խաչփակ փոքրիկ պատուհանից դեղնազոյն լոյս էր երևում. փայտէ, եռոտանի աշտանակի—ճրագկալի վրայ վառւում էր նահապետական ճրագը, նրա բոցը մեղմիւ պլպլում էր, նախ կարմրում, ապա ծխի վերածւում, բարձրանում քուլայ-քուլայ: Օդի թոյլ տատանումից անգամ բոցը ճկւում, լիզում էր հողէ ճրագի շուրթը ու ապա նորից ուղղւում, բարձրանում էր: Նշտաբաձև ամանի թափանցիկ ձէթի մէջ դալարուած օձի նման հանգչում էր պատրոյգը, որ գլուխը մի նեղ անցքից հանած կրակ էր ժայթքում ու լուսաւորում տունը: Բոցի ամեն մի շարժումից աշտանակի ըս-